ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթությունը որպես ինքնակա մտագործունեական ոլորտ. գաղափարախոսությունը, ծագումը, զարգացումը

Հանրակրթությունը շատ ուշ շրջանի պատմահասարակական երևույթ է: Մարդկության պատմությունը համարձակորեն կարելի է վերաիմաստավորել և ընկալել որպես համաշխարհային հասարակության օրգանական ամբողջության աստիճանական ձևավորման, համընդհանուր մտագործունեական իրողության կայացման, համամարդկային գիտակցության ու ինքնագիտակցության զարգացման, համընդհանուր հոգևոր հասունացման ընթացք: Ինքը՝ պատմությունը, որպես իրողություն, հնարավոր է դառնում ի հաշիվ հատուկ կազմակերպված ուսուցման ու դաստիարակության գործընթացների: Եվ, բնականաբար, ուսումնադաստիարակչական գործընթացների կազմակերպումն աստիճանաբար առանձնանում է որպես մտագործունեության ինքնուրույն ոլորտ՝ ձեռք բերելով սեփական իմաստ և նշանակություն:

Հասարակական գիտակցությունը վաղուց արդեն իր պատկերացումներում առանձնացրել է հասարակության և հասարակական սուբյեկտների ուսումնադաստիարակչական մակարդակը՝ որպես համակեցության կարգավորման և մարդկության գոյատևման գլխավոր պայմաններից մեկը: Սա է, որ տալիս է ուսումնադաստիարակչական գործընթացներին հանրակրթական իմաստ, ինչն էլ հարկադրում է վերանայել և վերաիմաստավորել հենց իր՝ կրթության զարգացման պատմական ընթացքը:

Պատմական էքսկուրս. կրթության կազմակերպման եղանակը

Ուսումնադաստիարակչական գործընթացների կազմակերպումը միշտ էլ եղել է մարդկության կարևորագույն ու դժվարլուծելի խնդիրներից մեկը: Համարձակորեն կարելի է պնդել՝ չկա ու չի եղել մի մարդ, որին հուզած չլինի իր և իր մտերիմների ապագայի հարցը, և որն այդ հարցը կապած չլինի ուսուցման ու դաստիարակության անհրաժեշտության հետ:

Հին ժամանակներում հասարակական մակարդակով կրթական պահանջները բավական համեստ էին. կրթական հատուկ մակարդակ ունեցող փոքրաթիվ անհատների առկայությունը բավարար էր հասարակության գոյատևման ու հետագա զարգացման գործընթացների ապահովման համար[1]:

[1] 2000 տարի առաջ Հին Հռոմում տեղի ունեցավ մի արտակարգ երևույթ. Սենատը կայսրության միջոցների հաշվին աշխատավարձ նշանակեց Մարկոս Կվինտիլիանին, որը, չնայած երիտասարդ տարիքին, արդեն ձեռք էր բերել մեծ մանկավարժի համբավ: Փաստորեն, հասարակությունը սկսում էր դրսևորել շահագրգիռ վերաբերմունք կրթության խնդիրների նկատմամբ (տե՛ս [89, 101]):

Սակայն արդեն միջին դարերում հասարակության առաջավոր օղակներն (օրինակ՝ եվրոպական ազգերը) առնչվեցին այն պրոբլեմի հետ, որ հատուկ կրթական մակարդակ ունեցող փոքրաթիվ անհատների առկայությունն արդեն բավարար չէր հասարակության հետագա զարգացման համար: Անհրաժեշտ էր ապահովել ոչ թե անհատական, այլ հասարակական կրթական մակարդակ: Այս խնդիրը ենթադրում էր անցում զանգվածային կրթության, ինչը հնարավոր կլիներ միայն կրթության կազմակերպման ընդունված ձևից հարկադրաբար հրաժարվելու և ավելի նպաստավոր ձևեր ստեղծելու ու տարածելու միջոցով:

Իսկ ընդունված ձևն անհատական ուսուցումն էր՝ վարպետ-ենթավարպետ, դաստիարակ-սան կառուցվածքով: Այս ձևը, լինելով արդյունավետ, ուներ խիստ սահմանափակ հնարավորություններ սովորողների բազմաքանակությունն ապահովելու տեսակետից: Իհարկե, կիրառվում էին նաև խմբային քննարկումների ձևերը՝ որևէ հեղինակավոր իմաստունի ու փիլիսոփայի առաջնորդությամբ, սակայն դա վերաբերում էր արդեն հասուն տարիքի հասած և իմաստասիրությունը կյանքի ուղի ընտրած անհատներին:

XV-XVII դարերի մանկավարժական հնարամտություններն ու հայտնագործությունները, որոնք ավելի ամբողջական ու համակարգված դրսևորվեցին Ռատկեի, Կոմենսկու մոտեցումներում, կատարեցին մանկավարժական հեղաշրջում և՛ գիտակցական պատկերացումներում, և՛ հասարակության ապրելակերպում: Փաստորեն, բացահայտվեցին ու ցուցադրվեցին խմբերով ուսուցում կազմակերպելու հնարավորություններն ու առանձնահատկությունները:

Աստիճանաբար ձևավորվեց և ամենուրեք գերիշխեց կրթության կազմակերպման խմբային եղանակը՝ իր այնպիսի անբաժանելի ատրիբուտներով, ինչպիսիք են դասարանները, դասերը, ուսումնական առարկաները, ուսումնական պլանները, մասնագիտացված (առարկայական) ուսուցիչները և այլն: Հասարակությունը հնարավորություն ստացավ իր ավելի մեծ թվով անդամների համար ապահովել անհրաժեշտ կրթական մակարդակը:

Իհարկե, ապահովելով կրթության մասսայականացումը՝ հասարակությունը զրկվեց անհատական ուսուցման առավելություններից: Կարոդանալով շատերին ընդգրկել ուսումնադաստիարակչական գործընթացներում՝ հասարակությունը դեռ չապահովեց համընդհանուր գրագիտություն: Բայց այս սահմանափակումները մինչև XX դարը վճռորոշ չէին հասարակության ընդհանուր զարգացման համար:

XX դարը հասարակության հասունացման հերթական աստիճանի նվաճումով, մարդկային գործունեության նոր տեսակների ծավալումով

մարդկությանն ընդհարեց համընդհանուր ուսումնադաստիարակչական մակարդակի ապահովման և այդ խնդիրը կրթության կազմակերպման առկա՝ խմբային եղանակի միջոցով լուծելու անհնարինության պրոբլեմի հետ:

Հատուկ ուշադրություն դարձնենք. խոսքն արդեն վերաբերում է ոչ թե ուսումնադաստիարակչական գործընթացների մեջ ընդգրկված երեխաների բազմաքանակությանը, այլ համընդհանուր կրթական մակարդակի ապահովմանը:

Մինչև օրս հասարակության գրեթե բոլոր շերտերում մարդկային միտքը չի դադարում պրպտել ու որոնել կրթության ոլորտի կատարելագործմանն ու զարգացմանը նպաստող ձևեր և մոտեցումներ:

Քաղաքական ու պետական գործիչների համար հանրակրթությունը դարձել է ծրագրային նպատակների ենթակետ և գաղափարախոսական պայքարի կարևորագույն ոլորտ:

Գիտության ու մշակույթի առաջավոր դեմքերն առիթը չեն կորցնում ներկայացնելու կրթության կազմակերպման հարցերի վերաբերյալ իրենց դիտողություններն ու դատողությունները:

Փիլիսոփայական և հոգեբանական բազմաթիվ հետազոտություններ են կատարվում հանրակրթության նպատակների ու բովանդակության վերանայման ուղղությամբ: Այս բոլորը լրացնում ու ամրապնդում են մանկավարժական պրակտիկայի նորարարների ու ստեղծագործողների հնարագիտությունն ու հայտնագործությունները, որոնք վաղուց արդեն հավակնում են համատեղվելու, համակարգվելու և վերածվելու կրթության կազմակերպման նոր, հաջորդ եղանակի հիմնաքարերի:

Պատմական էքսկուրս. կրթության նպատակներն ու բովանդակությունը

Ինչպես ասվեց, հանրակրթությունը՝ որպես հասարակական երևույթ, մարդկության զարգացման շատ ավելի ուշ շրջանի իրողություն է[1]:

Բարոյադաստիարակչական գործընթացները մարդկային գործունեության մեջ միշտ էլ ներկայացված են եղել, իսկ անտիկ շրջանում արդեն կարևորվում էին հատուկ կազմակերպված ուսումնական խնդիրների ու գործընթացների հարցերը (տե՛ս [130]): Հետաքրքիր է նկատել, որ այդ ժամանակներում որպես կրթության բովանդակության միավոր հանդես էր գալիս գործունեության կոնկրետ տեսակը (արվեստ, արհեստ, մասնագիտություն), ուսուցումն անհատական բնույթ ուներ (որպես կանոն, իրա-

[1] Ֆրանսիայում 1880-ական թվականներին ընդունվեց օրենք համընդհանուր տարրական կրթության մասին: Այն հայտնի էր «Ֆերիի օրենքներ» անունով: Փաստորեն, «Ֆերիի օրենքներով» տարրական կրթությունը հայտարարվում էր պարտադիր, իսկ դպրոցն անջատվում էր եկեղեցուց (տե՛ս [81]):

գործվում էր ուսուցիչ-աշակերտ, վարպետ-ենթավարպետ սխեման):

Միջին դարերից սկսած՝ ավելի ու ավելի է կարևորվում հասարակության կրթական մակարդակը, որը ենթադրում էր կրթության մասսայականացում: Հենց այս ժամանակաշրջանում է հստակ դրսևորվում հասարակության հասունացման հերթական փուլի մի շատ կարևոր հայտանիշ. աշխարհայացքային պատկերացումները ոչ թե առաջանում են էմպիրիկ ընդհանրացումներից ու առողջ դատողություններից, այլ ձևավորվում են որպես գիտահետազոտական փորձարկումների ու տեսական ընդհանրացումների արդյունք:

Մտածողության տեսական մակարդակի յուրացմամբ սկիզբ է դրվում գիտության և գիտական առարկաների առաջացմանն ու զարգացմանը: Աստիճանաբար գիտությունը և գիտական մտածելակերպը դառնում են գերակայող հասարակության զարգացման, հասարակական կյանքի կազմակերպման, հասարակական իրադարձությունների կանխատեսման, բնության ու հասարակության երևույթների վերափոխման ու կառավարման հարցերում:

Սակայն գիտական մտածելակերպն ավելի արդյունավետ ու նպաստավոր գտնվեց բնության երևույթների ուսումնասիրման և բնության օրենքների ու օրինաչափությունների բացահայտման, պարզաբանման ու մեկնաբանման համար: Արդյունքում՝ մարդկության պատմության այդ ժամանակաշրջանը նշանավորվեց բնության աներևակայելի գաղտնիքների բացահայտմամբ և խոշորագույն գիտատեխնիկական նվաճումներով:

Այս ամենը խիստ անդրադարձավ նաև կրթության նպատակների ու բովանդակության որոշման և ընդհանրապես կրթության կազմակերպման հարցերի վրա: Կրթությունը նպատակաուղղվեց գիտական աշխարհայացքի ձևավորման և գիտելիքների յուրացման խնդիրներին, իսկ ուսուցման բովանդակության հիմնական միավորը դարձավ գիտելիքը:

Իր բովանդակությամբ այսպես վերաիմաստավորված և կողմնորոշված կրթությունը ուսուցման կազմակերպման ձևերի առումով աստիճանաբար վերափոխվեց ու ներկայացավ որպես ուսուցման կազմակերպման խմբային եղանակ՝ դաս-դասարանային (դպրոցներում) և դասախոսություն-սեմինարային (բուհերում) տարատեսակներով:

Եվ այսպես, կրկնենք. կրթության բովանդակության հիմնական միավորը դառնում է գիտելիքը, իսկ ուսուցման կազմակերպման հիմնական ձևը՝ խմբային ուսուցումը (ուսուցիչ-աշակերտական խումբ փոխազդեցության սխեմայով):

XX դարը մարդկությանը ներկայացրեց համընդհանուր ուսումնադաստիարակչական մակարդակի ապահովման պահանջ: Փաստորեն,

կրթությունը վերաիմաստավորվեց որպես հանրակրթություն, որը շոշափում է համընդհանուր ուսումնադաստիարակչական մակարդակի հարցը և ենթադրում հասարակության յուրաքանչյուր անդամի որակին առնչվող հարցադրում: Այստեղ գիտելիքը՝ որպես կրթության բովանդակության հիմնական միավոր, և «գիտական աշխարհայացք» հասկացությունը խիստ անբավարար են հանրակրթական նպատակների ու խնդիրների սահմանման և ձևակերպման համար: Առաջին պլան են մղվում արժեքային համակարգը, մտածողության որակը, մտահաղորդակցական ընդհանուր ունակությունները, գործունեական կարողությունները և այլ որականիշեր: Ընդ որում՝ խոսքը վերաբերում է հասարակության և՛ ընդհանուր, և՛ յուրաքանչյուր անդամի որակին:

Այսպիսով, հանրակրթությունը հաստատվեց որպես հասարակական կեցության անխուսափելի երևույթ, պետական պատասխանատվության կարևորագույն խնդիր և հասարակության հասունացման հետագա մակարդակների անցման որոշիչ գործոն:

Սակայն հենց հանրակրթական իմաստով վերաձևակերպված կրթական խնդիրները մարդկության համար դրսևորվել են որպես պետական ու հասարակական կյանքի կազմակերպման դժվարագույն հիմնահարցեր: Այսօր, փաստորեն, չկա մի երկիր, որը բավարարված լինելով կրթական համակարգի վիճակով՝ չկարևորի այդ համակարգի բարեփոխման հարցը: Ամենուրեք առաջնահերթ են հատկապես պետական հանրակրթական քաղաքականության, հանրակրթության զարգացման ծրագրերի և պետական հանրակրթական չափորոշիչների մշակման հիմնահարցերը:

Հատկապես դժվար է ճշգրտել գիտության տարբեր ճյուղերը ներկայացնող ավանդական ուսումնական առարկաների հանրակրթական իմաստն ու նշանակությունը՝ առանց հրաժարվելու գիտելիքի և տեղեկությունների գերակայական արժևորումից: Իհարկե, սխալ կլիներ ենթադրել, թե վերոհիշյալ դատողությունների իմաստը գիտելիքի կարևորության մերժումն է: Խոսքը վերաբերում է հանրակրթության նպատակների ու բովանդակության որոշման հարցում գիտելիքների ու տեղեկությունների կարգավիճակին:

Ժողովրդավարությունը և հանրակրթությունը

Հասարակական կյանքի կազմակերպման, համակեցութային պրոբլեմների հաղթահարման, մարդկանց ու մարդկային միավորումների բարեկեցիկ գոյատևման ապահովման հարցերը բոլոր դարաշրջաններում էլ կարևորագույններից են եղել փիլիսոփայական և քաղաքական մտածողության մեջ: Պատմական զարգացման ընթացքը հանգեցրել է ժողովրդավարական արժեքների գերակայմանն ու ժողովրդավարական կացութաձևի կառուց-

մանը: Այս հանգամանքը, փաստորեն, հիմք է հանդիսանում հանրակրթության իմաստի ու նշանակության հարցերում ժողովրդավարական հասարակարգի քաղաքացի ձևավորելու խնդիրը կարևորելու համար:

Ժողովրդավարական հասարակարգի քաղաքացի լինելու ամենաանհրաժեշտ պայմանը հասարակական կյանքի կազմակերպմանն ու կառավարմանը գործուն մասնակցություն ունենալն է, որը ենթադրում է հասարակական **երևույթների վերլուծության**, հասարակական **գործընթացների կառավարման**, հասարակական **իրադարձություններում կողմնորոշվելու** և հասարակական **իրադրությունների վրա ազդելու** յուրատեսակ գիտելիքների և կարողությունների ձեռքբերում:

Այդ յուրատեսակությունը պայմանավորված է նրանով, որ մարդկային գործունեությունն, ըստ էության, շինարարական է, և հաշվի առնելով նրա հասարակական բնույթը՝ այն միշտ ներկայանում է որպես, այսպես կոչված, «ապագայի շինարարություն» (տե՛ս [140]): Իհարկե, գործունեության տարբեր տեսակներն ունեն ինքնուրույն նշանակություն և արժեք, սակայն վերջին հաշվով նրանք ներառվում են մի ամբողջական գործունեության կազմում, որն ավելի ու ավելի նշմարելի է դրսևորվում շինարարական բնույթով ու առանձնահատկություններով:

Սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ հասարակագիտության մեջ հետզհետե ավելի արժևորվում և կարևորվում են մեթոդական գիտելիքներն ու մեթոդաբանական միջոցները: «Ի՞նչ է», «ինչպիսի՞ն է» և «ինչո՞ւ է այդպես» հարցադրումները կորցնում են իրենց ինքնուրույն արժեքը և դառնում են «ի՞նչ անել» և «ինչպե՞ս անել» հարցերին ենթակա:

Այս ամենը խիստ առնչվում է հանրակրթության խնդիրների ձևակերպման ու հանրակրթության բովանդակության վերակառուցման հարցերին: Գիտելիքների ձեռքբերման խնդիրը ենթակա է դառնում նոր գիտելիքների ստացման մեթոդների ու միջոցների յուրացման խնդրին: Բնական ու հասարակական երևույթների ճանաչման խնդիրը ենթակա է դառնում բնական ու հասարակական երևույթների վերափոխման մեթոդների ու միջոցների յուրացման խնդրին: